

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

ՀՀ Լոռու մարզում Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի և խաղաղության
70-ամյակին նվիրված միջոցառումների համակարգող աշխատանքային խմբի
խորհրդակցություն ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ

Տիգրան Բաղդյանի մոտ

06.05.2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Սամվել Գրիգորյան - մարզպետարանի տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար մասնագետ
Արամ Ռևազյան - մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժնի պետ
Արման Սարգսյան - ՀՀ Լոռու մարզպետի օգնական
Վ. Դոխոյան - ՀԵՀ Լոռու մարզային կենտրոնի համակարգող
Գ. Բաղդյան - Վանաձոր քաղաքի կրթության և մշակույթի բաժնի պետ
Գ. Խաչատրյան - ՀՀ պատերազմի, աշխատանքի, զինված ուժերի և
իրավապահ մարմինների վետերանների Լոռու մարզային խորհրդի նախագահ
Ս.Քառայան - պատմաբան
Ռ. Պարսամյան - պատմաբան
Կ. Արշակյան - «Ֆորտունա» մարզային հեռուստաընկերության տնօրեն
Խ.Բալայան - Վանաձորի պաշտպանական ուսումնական կենտրոնի նախագահ
Հ. Պետրոսյան - 3-րդ Բանակային կորպուսի ներկայացուցիչ

Օրակարգ՝

1. Մարզային միջոցառումների իրականացման ընթացքի մասին /զեկ՝
Ա. Ռևազյանը /
2. Մայիսի 9-ի միջոցառումների ծրագրի ժամանակացույցը Վանաձորում
/զեկ՝ Գ. Բաղդյան /
3. 3-րդ Բանակային կորպուսում իրականացվող միջոցառումների
ժամանակացույցը /զեկ՝ գնդապետ Հ. Պետրոսյան /
4. Այլ հարցեր

Առաջարկվեց՝

1. Խորհրդային Միության հերոս Գ. Վարդումյանի և Հայրենական Մեծ
պատերազմի լեգենդար հետախույզ Հ. Զաքարյանի հուշարձանների
ծաղկեպսակ դնելու կազմակերպում:

2. Անհրաժեշտության դեպքում հերթապահ տրանսպորտային միջոցների տրամադրում:


Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

Ս. Խալաթյանին- Ապահովել Հայրենական Մեծ պատերազմի 70-ամյա տարելիցին նվիրված մարզային միջոցառումների լուսաբանումը տարբեր ՁԼՄ-ներով:

Ա. Ռեազյանին- Հետևել ըստ սահմանված ժամանակացույցի մարզային միջոցառումների իրականացմանը:

ՀՀ Լոռու մարզում Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի և խաղաղության 70-ամյակին նվիրված միջոցառումները համակարգող աշխատանքային խմբի անդամներին - Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել միջոցառումները պատշաճ մակարդակով անցկացնելու ուղղությամբ:

ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ



Տ. ԲԱՂՈՅԱՆ

Արձ. Մ.Հովհաննիսյան
0322 /2-31-99 /